Չափահաս անձին անգործունակ ճանաչելու և խնամակալ նշանակելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները ՀՀ օրենսդրության համաձայն

Բովանդակություն

Խնդրի արդիականությունը 2
1. Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները 2
Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում խնամակալության ինստիտուտի մասին 2
Խնամքի տակ գտնվող անգործունակ անձանց իրավունքների սահմանափակումները ... 5
Միջազգային իրավունքի դրույթներ 11
Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը 14
Այլ պետությունների իրավակիրառ պրակտիկան 16
2. Ամփոփում 17
Խնդիրները 17
Առաջարկվող լուծումները 21
3. Օգտագործված գրականություն 22

59 Tigran Mets st., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

Խնդրի արդիականությունը

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ճանաչվել անգործունակ, ինչի հետևանքով նրանք զրկվում են իրենց իրավունքներից պատշաճ և լիարժեք օգտվելու, որոշում կայացնելու և ինքնուրույն գործելու հնարավորությունից ինչպես կյանքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերում, այնպես էլ ամենօրյա կենցաղային հարցերում, ինչպես նաև իրենց գործողությունների համար պատասխանատվություն կրելու պարտավորությունից:

Ըստ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից կազմակերպությանը տրամադրված տեղեկատվության՝ 2010 թ. հունվարի 1-ից մինչ 2012 թ. հունիս ամիսը ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում անձին անգործունակ ճանաչելու նպատակով ստացվել է 739 դիմում, որից բավարարվել է 447-ը, այսինքն՝ դիմումների գրեթե 60 տոկոսը:

2010 թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ-ն վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որով պետությունը պարտավորվել է ապահովել հետևյալ իրավունքները՝ հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներգրավվածություն (հ. 3, գ. կետ) և մյուսների հետ հավասար հիմունքներով գործունակություն բոլոր ոլորտներում (հ. 12, 2-րդ մաս):

Սույն ուսումնասիրությամբ նպատակ է դրվել վեր հանել ՀՀ օրենսդրության համաձայն անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգերի և հետևանքների առանձնահատկությունները, դրանց համապատասխանելիությունը միջազգային չափորոշիչներին, ինչպես նաև մշակել համապատասխան առաջարկություններ:

1. Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները

Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում խնամակալության ինստիտուտի մասին

Ըստ ՀՀ քաղ. օրենսգրքի՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել ՀՀ քաղ. դատ. օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն և իր անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը:

Բացի այդ, քրեական դատավարության օր-ով սահմանված է, որ եթե անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պատճառով չի կարող մասնակցել գործով վարույթին, քննիչը կամ դատախազն այդ մասին կազմում են արձանագրություն, որն ուղարկվում է դատավորին՝ համապատասխան անձին անգործունակ ճանաչելու հարցը լուծելու համար: Այս պարագայում պարզ չէ, թե ինչ ընթացակարգով է դատարանում լուծվում տվյալ անձին անգործունակ ճանաչելու հարցը (ՀՀ քրեական դատ. օր-ի 451-րդ հոդվածի 4-րդ մաս):

Անձին անգործունակ ճանաչելուց հետո խնամակալության կարիք ունեցող անձի բնակության վայրի խնամակալության մարմինը, մեկ ամսվա ընթացքում, սկսած այն օրվանից, երբ նշված մարմնին հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն սահմանելու անհրաժեշտությունը, նշանակում է խնամակալ: Մինչև խնամակալ նշանակելը խնամակալի պարտականություններն իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինը:

Խնամակալը նշանակվում է իր համաձայնությամբ: Ընդ որում, պետք է հաշվի առնվեն նրա բարոյական և անձնական այլ հատկանիշները, խնամակալի պարտականություններ կատարելու ունակությունը, նրա ու խնամակալության կարիք ունեցող անձի միջև եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաև խնամարկյալի ցանկությունը:

Խնամակալության կարիք ունեցող և համապատասխան դաստիարակչական, բուժական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նման այլ հաստատություններում գտնվող կամ տեղավորված քաղաքացիների խնամակալներն այդ հաստատություններն են:

Խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարվում են անհատույց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Խնամարկյալի գույքի պահպանման օրենսդրական երաշխիքներ

Խնամակալները և հոգաբարձուները պարտավոր են հոգալ իրենց խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը (ՀՀ քաղ. օր-ի 38-րդ հոդված):

Խնամարկյալ քաղաքացու եկամուտները՝ ներառյալ խնամարկյալին իր գույքի կառավարումից հասանելիք եկամուտները, բացառությամբ այն եկամուտների, որոնք խնամարկյալը կարող է տնօրինել ինքնուրույն, խնամակալը ծախսում է միայն ի շահ խնամարկյալի՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվությամբ:

Առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվության՝ խնամակալը խնամարկյալի եկամուտների հաշվին իրավունք ունի անհրաժեշտ ծախսեր կատարել խնամարկյալի ապրուստի համար:

Առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության՝ խնամակալն իրավունք չունի կնքել խնամարկյալի գույքի օտարման՝ ներառյալ փոխանակության կամ նվիրատվության, վարձակալության, այդ գույքն անհատույց օգտագործման հանձնելու կամ գրավ դնելու գործարքներ, որոնք հանգեցնում են խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, բաժանել նրա գույքը կամ դրանից բաժիններ առանձնացնել, ինչպես նաև խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարք: Խնամակալը, նրա ամուսինը և մերձավոր ազգականներն իրավունք չունեն գործարքներ կնքել խնամարկյալի հետ, բացառությամբ խնամարկյալին որպես նվեր կամ անհատույց օգտագործման գույք հանձնելը, ինչպես նաև խնամարկյալին ներկայացնել նրա ու խնամակալի ամուսնու և նրանց մերձավոր ազգականների միջև գործարքներ կնքելիս կամ դատական գործեր վարելիս (ՀՀ քաղ. Օր-ի 39-րդ հոդված):

Խնամակալության դադարման կարգը

Չափահաս քաղաքացիների նկատմամբ խնամակալությունը դադարում է խնամակալի կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու մասին դատարանի վճռով (հ. 42):

Սահմանված է, որ այն դեպքերում, երբ վերացել են այն հիմքերը, որոնց ուժով քաղաքացին ճանաչվել էր անգործունակ, խնամակալը պարտավոր է միջնորդել դատարան՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու և նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը կամ հոգաբարձությունը վերացնելու համար:

Խնամքի տակ գտնվող անգործունակ անձանց իրավունքների սահմանափակումները

1. Քաղաքացիական իրավունքներ

Անգործունակ ճանաչված քաղաքացիները զրկվում են քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակից հանդիսանալու հնարավորությունից:

Այսպես՝ անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը (ՀՀ քաղ. օր-ի 31-րդ հոդվածի 2-րդ մաս), խնամակալները խնամարկյալների ներկայացուցիչներն են օրենքի ուժով և նրանց անունից ու ի շահ նրանց կնքում են բոլոր անհրաժեշտ գործարքները (ՀՀ քաղ. օր-ի 34-րդ հոդվածի 2-րդ մաս):

2. Աշխատանքային իրավունքներ

Անգործունակ ճանաչված քաղաքացին զրկվում է աշխատելու իրավունքից, քանզի ըստ Աշխատանքային օրենսգրքի, աշխատողը օրենսգրքով սահմանված տարիքի հասած **գործունակ** քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի (ՀՀ աշխատանքային օրենսգիրք 17-րդ հոդված, 1-ին մաս):

3. Ընտրական իրավունքներ

Անգործունակ ճանաչված քաղաքացիները զրկվում են քաղաքական կյանքում մասնակցության, երկրի քաղաքական կյանքի վրա ազդեցություն ունենալու հնարավորությունից, քանզի նրանք զրկվում են ընտրական գործընթացներին մասնակցելու իրավունքից:

Այսպես՝ դատարանի վճռով անգործունակ ճանաչված քաղաքացիները, ըստ ընտրական օրենսգրքի, չեն կարող ընտրել և ընտրվել (ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի 3-րդ մաս, Ընտանեկան օր. 2-րդ հոդվածի 3-րդ մաս):

4. Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունք

Անգործունակ ճանաչված անձի խնամակալի դիմումի հիման վրա անձը կարող է ընդունվել հոգեբուժական հաստատություն դիսպանսերային բուժում ստանալու նպատակով, այսինքն փաստացի անձը կարող է զրկվել ազատությունից, ինչպես նաև

նրա նկատմամբ կարող է բժշկական միջամտություն իրականացվել առանց իր համաձայնության նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա:

Այսպես, ըստ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի՝ տնական (քրոնիկ) հոգեկան խանգարումներով տառապող անձի նկատմամբ, իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն, իրականացվում է դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն, որը ներառում է հաշվառում և շարունակական հսկողություն ու բուժում կամ սոցիալական վերականգնում կամ հոգեբուժական փորձաքննություն («Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մաս):

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված հիվանդին, ինչպես նաև այն դեպքերում, երբ հիվանդի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է **նրա օրինական ներկայացուցչի կողմից** («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ պարբերություն):

Հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կատարվում է նրա կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի (հարկադրական միջոցների կիրառման և ոչ հոժարակամ (հարկադիր) հոսպիտալացման դեպքերը) («Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս):

5. Տեղեկատվության ազատության իրավունք

Անգործունակ ճանաչված քաղաքացիները զրկած են անձամբ իրենց առողջական վիճակի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու իրավունքից:

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված հիվանդների առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ պարբերություն):

Ըստ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի՝ քաղաքացիների հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են հիվանդին և նրա օրինական ներկայացուցչին նրանց պահանջով՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում («Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված): Չնայած նշված հոդվածով հոգեկան առողջության

հետ խնդիրներ ունեցող անձը ճանաչվում է որպես տեղեկատվության ազատության իրավունքի սուբյեկտ, սակայն, հաշվի առնելով, որ նույն հոդվածով հոգեկան առողջության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունը ամրագրված է նաև հիվանդի օրինական ներկայացուցչի համար, կարելի է եզրակացնել, որ հոգեկան առողջության հետ խնդիր ունեցող անգործունակ ճանաչված քաղաքացին օգտվում է սույն իրավունքից անուղակի կերպով՝ օրինական ներկայացուցչի միջոցով: Նույն օրենքով նաև սահմանված է, որ բժիշկը պարտավոր է հոգեկան խանգարումով տառապող անձին **կամ** նրա օրինական ներկայացուցչին տեղեկություններ տրամադրել հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների մասին («Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մաս): Այսինքն նշված տեղեկատվությունը անձի օրինական ներկայացուցչին տրամադրելով՝ բժիշկը պարտավոր չէ նույն տեղեկատվությունը տրամադրել նաև հոգեկան առողջության հետ խնդիր ունեցող անձին:

6. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

ՀՀ օրենսդրությամբ սահմանափակվում են անգործունակ ճանաչված անձի ամուսնաընտանեկան իրավունքները: Այսպես, արգելվում է ամուսնություն կնքել այն անձանց միջև, որոնցից թեկուզև մեկին դատարանը ճանաչել է անգործունակ (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդված): Իսկ դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու **խնամակալի** դիմումի հիման վրա ամուսնությունը կարող է դադարել ամուսնալուծության միջոցով (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 13-րդ հոդված):

Ըստ Ընտանեկան օրենսգրքի՝ որդեգրողներ չեն կարող լինել դատարանի կողմից անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիները, ամուսինները, որոնցից մեկը դատարանի կողմից ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 116-րդ հոդվածի 1-ին մասի ա) և բ) կետ):

Հոգեբուժական հաստատությունում գտնվող անձը, որը ճանաչվել է անգործունակ կարող է զրկվել խորհրդապահական պայմաններում այցելուների հետ շփվելու հնարավորությունից: Այսպես, ըստ «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի՝ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց, ինչպես նաև

անչափահաս հիվանդներին այցելուների հետ հանդիպման ժամանակ բժշկական համապատասխան ցուցումների դեպքում բժշկի հանձնարարությամբ ուղեկցում է տվյալ բաժանմունքի բուժքույրը: («Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքի հավելված Ընթացակարգի II -րդ բաժնի, 2-րդ մաս):

7. Արդարադատության մատչելիության իրավունք

Բացի այն, որ անգործունակ ճանաչված անձը զրկվում է հիմնական նյութական իրավունքների անմիջականորեն և առհասարակ իրականացնելու հնարավորությունից, նա նաև զրկվում է քաղաքացիական, վարչական և քրեական դատավարական ընթացակարգերում ինքնուրույն հանդես գալու, իր իրավունքները անձամբ, սեփական նախաձեռնությամբ պաշտպանելու և վերականգնելու հնարավորությունից:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության նորմերից ելնելով՝ անգործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց խնամակալները (ՀՀ քաղ. դատ. օր-ի 43-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ գործին մասնակցող անձին անգործունակ ճանաչելու դեպքում դատարանը պարտավոր է կասեցնել գործը (ՀՀ քաղ. դատ օր-ի 105-րդ հոդվածի 4-րդ մաս):

Ըստ վարչական դատավարության օր-ի նույնպես՝ անգործունակ ճանաչված քաղաքացու իրավունքները և ազատությունները դատավարությունում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողը, խնամակալը, հոգաբարձուն և օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք (ՀՀ վարչական դատավարության օր-ի 4-րդ հոդվածի 6-րդ մաս): Անգործունակ և սահմանափակ գործունակ քաղաքացու իրավունքները և ազատությունները դատարանում պաշտպանում է նրա օրինական ներկայացուցիչը (Վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մաս)

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նաև սահմանված է, որ գործի քննության ընթացքում տասնչորսից տասնութ տարեկան անչափահասները, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիները **լսվելու իրավունք ունեն**, իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահասին կամ անգործունակ ճանաչված քաղաքացուն Վարչական դատարանը **կարող է** գործի քննության ընթացքում ընձեռել լսվելու իրավունք (4-րդ հոդվածի 7-րդ մաս):

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ անգործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի իրավունքները նրանց փոխարեն իրականացնում են նրանց օրինական ներկայացուցիչները (ՀՀ քրեական դատավարության օր-ի 59-րդ հոդվածի 4-րդ մաս, 61-րդ հոդվածի 6-րդ մաս, 63-րդ հոդվածի 7-րդ մաս, 65-րդ հոդվածի 6-րդ մաս):

Ավելին, ՀՀ քրեական դատավարության օր-ով սահմանված է, որ արդարացվածի մահվան կամ անգործունակության դեպքում պահանջի իրավունքը գույքային վնասի հատուցման, դատարանի կամ քննություն իրականացնող մարմնի կողմից արդարացման մասին արդարացվածի նախկին և ներկա աշխատանքի, ուսման, բնակության վայր հայտնելու, կասկածանքի կամ մեղարանքի վերաբերյալ տեղեկատվություն հրապարակած լրատվության միջոցի՝ գործով կայացված վերջնական որոշման մասին հրապարակելու պահանջների իրավունքները անցնում է նրա **մոտակա հերթի ժառանգներին** (ՀՀ քր. դատ. օր-ի 66-րդ հոդվածի 11-րդ մաս): Տվյալ դեպքում առկա է օրենսդրական բաց, քանզի նույնիսկ հաշվի առնելով ներկայում գործող օրենսդրական կարգավորումները՝ անգործունակ ճանաչված անձի դեպքում վերոնշյալ պահանջների իրավունքը կարող էր պատկանել անգործունակ ճանաչված անձի օրինական ներկայացուցչին: Ամեն դեպքում սույն դրույթի կարգավորումներից երևում է, որ անգործունակ ճանաչված արդարացված անձը զրկվում է իր գույքային իրավունքների պաշտպանության և բարի համբավի վերականգնման հնարավորությունից:

Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է, որ անգործունակ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը քրեական գործով վարույթի ընթացքում իրականացնում է նրանց իրավունքները, բացի այն իրավունքներից, որոնք անբաժանելի են նրանց անձից (ՀՀ քրեական դատավարության օր-ի 77-րդ հոդվածի 2դ մաս): Միևնույն ժամանակ սահմանված է, որ **անգործունակ** տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրավունք չունի դատավարությանն իրականացնել մի շարք գործողություններ իր կողմից ներկայացվող **սահմանափակ գործունակ ճանաչված մասնակցի** անունից, դրանք են՝ 1) հետ վերցնել նրա նկատմամբ քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելու վերաբերյալ բերված բողոքը, 2) հայտարարել հանցանքի կատարման մեջ իր կողմից ներկայացվող

մեղադրյալի մեղավորության մասին, 3) հաշտվել տուժողի, կասկածյալի, մեղադրյալի հետ, 4) ընդունել մեղադրյալին ներկայացված հայցը և հրաժարվել քաղաքացիական հայցվորի ներկայացրած հայցից, 5) հետ վերցնել դատավարությանը՝ իր կողմից ներկայացվող մասնակցի ներկայացրած բողոքը (ՀՀ քրեական դատավարության 77-րդ հոդվածի 4-րդ մաս): Պարզ չէ, թե ինչ է նկատի ունեցել օրենսդիրը տվյալ դեպքում՝ արդյոք տվյալ պարագայում խոսք է գնում անգործունակ ճանաչված, թե սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների և նրանց օրինական ներկայացուցչի մասին:

Այսպիսով, անգործունակ ճանաչված քաղաքացին զրկվում է՝

1. անձամբ իր անունից տարբեր տեսակի քաղաքացիաիրավական գործարքներ կնքելու հնարավորությունից,
2. աշխատանքի ընդունվելու, աշխատելու հնարավորությունից,
3. ընտրելու և ընտրվելու հնարավորությունից,
4. անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի երաշխիքներով պաշտպանված լինելու հնարավորությունից,
5. տեղեկատվություն ստանալու հնարավորությունից,
6. լիարժեք անձնական և ընտանեկան կյանք վարելու հնարավորությունից,
7. արդարադատության մատչելիության հնարավորությունից:

Անձը զրկվում է հասարակական կյանքում ներգրավվելու, ինքնուրույն և լիաժեք կյանք վարելու, հասարակությանը պիտանի անդամ դառնալու այն հնարավորություններից, որոնք իրեն ընձեռում են աշխատանքը, ընտանեկան կյանքը, մասնակցությունը քաղաքական կյանքում: Անձին անգործունակ ճանաչելը հանգեցնում է քաղաքացիաիրավական տարրական գործարքներ կնքելու հնարավորությունից, ինչպիսիք են խանութից առաջին անհրաժեշտության իրեր գնելը, սեփական գույքը տնօրինելը կամ վերջին հաշվով սեփական գույքի տնօրինմանը մասնակցություն ունենալը:

Այս ամենը հանգեցնում է անձի՝ հասարակությունից մեկուսացմանը և, ինչու ոչ, նաև մտավոր ունակությունների հետզարգացմանը:

Նույնիսկ եթե հաշվի առնենք, որ սույն սահմանափակումները կիրառվում են այդ

անձի և մյուս անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով, դա չի կարող հանդիսանալ հիմնավոր պատճառ անձին հասարակության այսպես ասած «ստվեր-անդամների» վերածելու համար:

Բացի այդ, իրավական տեսանկյունից անձի իրավունքների պաշտպանության համար առավել վտանգավոր իրավիճակ է ստեղծում այն հանգամանքը, որ անձի իրավունքների և կյանքի նկատմամբ այս բոլոր սահմանափակումները կիրառվում են առանց հաշվի առնելու անձի անհատական կարիքները, մասնավորապես՝ թե որ ոլորտում ինչ տեսակի սահմանափակումներ են հարկավոր՝ հաշվի առնելով կոնկրետ անձի առանձնահատկությունները և իր սեփական կարիքներու ու պահանջմունքները:

Միջազգային իրավունքի դրույթներ

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա[1]

Համաձայն կոնվենցիայի 12-րդ հոդվածի 2-րդ մասի՝ մասնակից պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով ունեն գործունակություն (legal capacity) կյանքի բոլոր ոլորտներում:

Հարկ է նշել, որ կոնվենցիայի հայերեն թարգմանության մեջ «legal capacity» բառակապակցությունը թարգմանվել է որպես իրավունակություն:

ՀՀ օրենսդրությամբ տարբերակվում են իրավունակություն և գործունակություն հասկացությունները, այսպես՝

1. Իրավունակությունը հանդիսանում է քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը, որը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես, ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:
2. Գործունակությունը՝ իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունն է (քաղաքացիական գործունակություն), որը լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից: Քաղաքացիական օրենսգրքով սահմանվում է անձին անգործունակ ճանաչելու կամ գործունակությունը սահմանափակելու հնարավորությունը:

[1] Ընդունվել է ՄԱԿ-ի Ընդհանուր վեհաժողովի կողմից 2006 թ. դեկտեմբերի 13-ին, թիվ 61/106 հանձնարարական: ՀՀ-ի կողմից վավերացվել է 2010 թվականի հունվարի 22-ին: Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 2010 թ. հունիսի 22-ին:

Այս խնդրին է անդրադարձել Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների նախկին հանձնակատար Թ. Համմարբերգը «Մտավոր և սոցիալ հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքը» խնդրի վերաբերյալ փաստաթղթի մեջ: «Որոշ իրավական համակարգերը տարբերակում են իրավունքներ ունենալը և այդ իրավունքները գործնականում օգտագործելը և կիրառելը: …Մարդու իրավունքների տեսաբանները միանշանակ պնդում են, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածը ներառում է այս երկու կողմերը: Այլ կերպ ասած, իրավունքներ ունենալու ունակությունը ինքնստինքյան հանգեցնում է յուրաքանչյուր անձի կողմից ընտրված համապատասխան ընդունելի աջակցությամբ իրավունքները գործնականում օգտագործելու, կիրառելու ունակությանը»[2]:

<u>Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կոմիտեի մոտեցումները՝</u>

Կոմիտեն Թունիսի վերաբերյալ իր վերջնական դիտողություններում նշել է. «Կոմիտեն առաջարկում է, որ կողմ պետությունը վերանայի այն օրենսդրությունը, որը թույլ է տալիս կիրառել խնամակալություն, և մշակել օրենքներ և քաղաքականություն, որոնցով անձի փոխարեն որոշում կայացնելու համակարգը կփոխարինվի անձի կողմից աջակցողի միջոցով որոշում կայացնելու հնարավորությամբ: Բոլոր վարչական մարմինների աշխատակիցների և շահագրգռված անձանց համար անհրաժեշտ է իրականացնել վերապատրաստումներ[3]»:

Կոնվենցիայի 29-րդ հոդվածի վերաբերյալ իր առաջարկություններում Կոմիտեն նշել է, որ անհրաժեշտ է իրականացնել հրատապ միջոցառումներ, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք, ներառյալ նրանք, որքեր այժմ գտնվում են խնամակալության տակ, կարողանան օգտվել ընտրական իրավունքից, հասարակական կյանքում մասնակցելու հնարավորությունից բոլորի հետ հավասար պայմաններում[4]:

Նույնաբովանդակ առաջարկություններ կոմիտեն կատարել է նաև Իսպանիայիում և Պերուում այս ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ:

---

[2] Տես՝ ,Who gets to decide? Right to legal capacity for persons with intellectual and psychosocial disabilitiesե CommDH/IssuePaper(2012)2 , կետ 1.1, 3-րդ պարբերություն

[3] 23. The Committee recommends that the State party review the laws allowing for guardianship and trusteeship, and take action to develop laws and policies to replace regimes of substitute decision-making by supported decision-making. It further recommends that training be provided on this issue to all relevant public officials and other stakeholders. Concluding observations of the Committee on the Rights of Persons with Disabilities/ Tunisia

[4] 35. The Committee recommends the urgent adoption of legislative measures to ensure that persons with disabilities, including persons who are currently under guardianship or trusteeship, can exercise their right to vote and participate in public life, on an equal basis with others.

Չափահաս անգործունակ անձանց իրավունքների պաշտպանության սկզբունքների մասին Եվրոպայի Խորհրդի հանձնարարական[5]

3-րդ սկզբունք՝ Գործունակության առավելագույն պահպանումը

Օրենսդրական կարգավորման սկզբունքները պետք է ճանաչեն, որքանով դա հնարավոր է, անգործունակության տարբեր մակարդակների առկայությունը, ինչպես նաև անգործունակության ձևի փոփոխությունը ժամանակի ընթացքում:

Համապատասխանաբար պաշտպանության միջոցները չպետք է ավտոմատ կերպով կապված լինեն քաղաքացիական գործունակությունից ամբողջությամբ զրկելու հետ: Այնուամենայնիվ քաղաքացիական գործունակության սահմանափակումը պետք է հնարավոր լինի այն դեպքերում, երբ դա անհրաժեշտություն է հանդիսանում հետաքրքրված անձի պաշտպանության համար:

Մասնավորապես պաշտպանության միջոցները չպետք է հետաքրքրված անձին ինքնստինքյան զրկեն ընտրելու իրավունքից, իր գույքը կտակելու իրավունքից, ինչպես նաև տալ համաձայնություն կամ հրաժարվել իր առողջության հետ կապված հարցերում ցանկացած միջամտությունից, կամ ցանկացած ժամանակ ընդունել անձնական բնույթի այլ որոշումներ, երբ հետաքրքրված անձը ընդունակ է կատարել նման գործողություններ:

Անհրաժեշտ է քննարկել այնպիսի իրավական միջոցների հնարավորությունը, որոնց միջոցով չափահաս անձին թույլ կտրվի, եթե նույնիսկ կա կոնկրետ ոլորտում ներկայացուցչություն իրականացնելու անհրաժեշտություն, ներկայացուցչի թույլտվությամբ իրականացնել որոշակի գործողություններ կամ գործողություններ որոշակի ոլոտում:

Հնարավորության դեպքում չափահաս անձը պետք է իրավունք ունենա կնքել ամենօրյա վավեր գործարքներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մատչելիության և հասարակության կյանքում իրենց լիարժեք և ակտիվ մասնակցության մասին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականը[6]

[5] Committee of Ministers Recommendation No. R (99)4 of the to the Member states On Principles Concerning the Legal Protection of Incapable Adults, 23 February 1999.

[6] Parliamentary Assembly of the Council of Europe, Resolution 1642 (2009) on Access to rights for people with disabilities and their full and active participation in society, 27 January 2009, para. 7.

7. Առաջինը, Վեհաժողովը առաջարկում է պետություններին երաշխավորել, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք պահպանեն գործունակությունը և մյուս անձանց հետ հավասար հիմունքներով օգտվեն հետևյալ միջոցներով.

7.1. Չթույլատրել սահմանափակել կամ մյուս անձանց փոխանցել որոշումներ կայացնելու իրենց իրավունքը, միևնույն ժամանակ իրենց հանդեպ կիրառվող միջոցների ընթացքում պետք է հաշվի առնվեն իրենց անհատական առանձնահատկությունները և որոշումներ կայացնելիս նրանք պետք է հնարավորություն ունենան աջակցություն ստանալ որոշակի անձի կամ ցանցի կողմից:

7.2. Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ ապահովելով, որպեսզի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և Կամընտիր արձանագրության համապատասխան խնամակալության տակ գտնվող անձինք չզրկվեն իրենց հիմնական իրավունքներից (մասնավորապես՝ սեփականության, աշխատանքային, միություններ կազմելու և միությունների մեջ մտնելու, դատավարական գործողություններ իրականացնելու և կտակ կազմելու իրավունքներից), իսկ այն դեպքերում, երբ այս իրավունքների իրականացման համար իրրենց անհրաժեշտ է կողմնակի օգնություն, իրենց պետք է ցուցաբերվի համարժեք աջակցություն, որի դեպքում գլխավորը պետք է լինի իրենց անձնական ցանկությունները և մտադրությունները:

7.3. Բավարար երաշխիքներ տրամադրել, որպեսզի չթույլատրվի խնամակալության տակ գտնվող անձանց հանդեպ չարաշահումները, ներառյալ խնամակալների գործողությունների պարբերաբար ուսումնասիրման նպատակով մեխանիզմների ստեղծում և օրենսդրության մեջ խնամակալության հանդեպ պարտադիր կանոնավոր և առարկայական ուսումնասիրման հնարավորության ամրագրում, որի մեջ մասնակցություն կունենա հետաքրքրված անձը՝ ունենալով պատշաճ իրավական ներկայացուցիչ:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը

Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի

Սույն գործով դատարանը արձանագրել է, որ այն հանգամանքը, որ բողոք բերող անձը չի ունեցել դատարանի առջև հանդես գալու համար բավարար

գործունակություն, հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում[7]:

Դատարանը նաև արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ

- անձի մասնակցությունը որոշում կայացնելու գործընթացում հասցված է եղել զրոյի[8], քանզի բացի այն, որ անձը մասնակցություն չի ունեցել դատական նիստերին, անձամբ չի քննվել դատարանի կողմից, անձը նույնիսկ հնարավորություն չի ունեցել բողոքարկել որոշումը, քանի որ դատարանը վարույթ չի ընդունել դիմողի բողոքը:
- Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգիրքը առանձնացնում է ամբողջությամբ գործունակ և անգործունակ հասկացությունները, սակայն չի նախատեսում այլ սահմանային իրավիճակներ[9]: Այսպիսով, օրենսդրությունը հնարավորություն չի տալիս կիրառել անհատականացված մոտեցում յուրաքանչյուր դեպքում:

Սիկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության [10]

Սույն գործով դատարանը ճանաչել է անձին անգործունակ ճանաչելու հետևանքով ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի խախտում՝ որպես անհամաչափ միջամտություն անձի անձնական կյանքին:

Դատարանը արձանագրել է, որ

- անգործունակ ճանաչելու կամ գործունակությունը սահմանափակելու յուրաքանչյուր դեպքը պետք է հիմնված լինի բավարար վստահելի և վերջնական ապացույցների վրա: Բժշկական մասնագիտական զեկույցը պետք է նշի, թե ինչ տիպի գործողություններ է դիմումատուն ոչ ի վիճակի հասկանալ կամ ղեկավարել, որոնք են իր հիվանդության հետևանքները անձի սոցիալական կյանքի համար, առողջության, նյութական շահերին և այլն[11]:
- դատավորը անձնապես չի շփվել դիմումատուի հետ[12] և չի ապահովել նաև անձի պատշաճ իրավական պաշտպանությունը, քանզի անձի ներկայացուցիչը երբևէ չի հանդիպել դիմումատուին, երբևէ նրա պաշտպանության նպատակով որևէ

[7] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Շտուկատուրով ընդդեմ Ռուսաստանի (Shtukaturov v Russia), գործով, 2008 թ. մարտի 27, պարբ. 75,76.
[8] Նույնը, պարբ. 91
[9] Նույնը, պարբ. 95
[10] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Սիկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Sykorav. The Czech Republic) գործով, 2012 թ. նոյեմբերի 22
[11] Նույնը, պարբ. 103
[12] Նույնը պարբ. 108

միջնորդություն չի ներկայացրել, երբևէ նույնիսկ չի մասնակցել դատական լսումներին: Նա արդյունավետորեն մասնակցություն չի ունեցել քննության ընթացքին[13]:

Ալայոշ Կիշ ընդդեմ Հունգարիայի[14]

Սույն գործով դատարանը ճանաչել է ՄԻԵԿ-ի 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածով սահմանված մասնակի խնամակալության տակ գտնվող անձի ազատ ընտրության իրավունքի խախտումը:

Դատարանը նշել է, որ ազգային օրենսդիրը հայեցողության լայն շրջանակ ունի, թե ինչպես կարող են հիմնավորվել ընտրական իրավունքների սահմանափակումները ներկա ժամանակներում և այդ դեպքում ինչպես կարելի է հասնել «արդարացի հավասարակշռությանը»[15]: Միևնույն ժամանակ Դատարանը նշել է, որ նա /Դատարանը/ չի կարող ընդունել, որ մասնակի խնամակալության տակ գտնվող անձանց ընտրական իրավունքների բացարձակ սահմանափակումը հայեցողության ընդունելի շրջանակներում է, քանզի տվյալ դեպքում հաշվի չեն առնվում նրա փաստացի ունակությունները[16]: Դատարանը նաև նշել է, որ սահմանափակման կիրառումը, որի մասին խոսք է գնում, չի տարբերակում լրիվ խնամակալության կամ մասնակի խնամակալության տակ գտնվող անձանց[17]:

Այլ պետությունների իրավակիրառ պրակտիկան

Ռուսաստանի Դաշնություն

2012 թ. հունիսի 27-ին ՌԴ սահմանադրական դատարանը որոշում է կայացրել քաղաքացի Ի. Բ. Դելովայի բողոքի հիման վրա քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի, 31-րդ հոդվածի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի սահմանադրականության վերաբերյալ: ՌԴ սահմանադրական դատարանը իր որոշման մեջ նշել է, որ անհրաժեշտ է մշակել օպտիմալ համակարգ, որով անհրաժեշտ կլինի գործունակության աստիճանը որոշելիս հաշվի առնել անձի՝ իր գործողությունների նշանակությունը հասկանալու ունակությունը, հաշվի առնել և

[13] Նույնը,պարբ. 109
[14] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Ալայոշ Կիշ ընդդեմ Հունգարիայի (Alajos Kiss v. Hungary) գործով, 2010 թ. մայիսի 20
[15] Նույնը, պարբ. 41
[16] Նույնը, պարբ 42
[17] Նույնը, պարբ 39

ղեկավարել դրանք կյանքի կոնկրետ ոլորտներում, միևնույն ժամանակ չթույլատրել անձի արժանապատվության նվազեցում և իր անձնական կյանք անհամաչափ ներխուժում[18]:

Չեխիայի Հանրապետություն

Չեխիայի Հանրապետության Սահմանադրական դատարանը 2009 թ. օգոստոսի 18-ին կայացված որոշմամբ ճանաչել է հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող անձի իրավունակության, անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի խախտումները, քանզի դատարանները բավարար կերպով չեն հիմնավորել անձին անգործունակ ճանաչելու մասին որոշումը, մասնավորապես հիմնվել են միայն փորձագիտական եզրակացության վրա: Ո՛չ այն անձը, որը ճանաչվել է անգործունակ, ո՛չ էլ իր հարազատները դատարանում չեն լսվել[19]: Հարկ է նաև նշել, որ Չեխիայի Հանրապետության Սահմանադրական դատարանը մերժել է քաղաքացիական օրենսգրքի՝ անձին ամբողջությամբ անգործունակ ճանաչելու հնարավորությունը թույլատրող դրույթները՝ Սահմանադրությանը հակասող ճանաչելու մասով[20]:

2012 թ. Չեխիայի Հանրապետությունում ընդունվեց նոր քաղաքացիական օրենսգիրք՝ համաձայն որի անձին այլևս հնարավոր չէ զրկել գործունակությունից. սահմանված է անձին աջակցողի միջոցով որոշում կայացնելու մեխանիզմը՝ որպես խնամակալության համակարգին փոխարինող միջոց, դատավորի կողմից անձին լսելու պարտադիր պայմանը: Քաղաքացիական օրենսգիրքը ուժի մեջ կմտնի 2014 թ. հունվարի 1-ից:

2. Ամփոփում

Խնդիրները

1. Անգործունակ ճանաչելու ոչ իրավաչափությունը

[18] Տե՛ս ՌԴ սահմանադրական դատարանի 2012 թ. հունիսի 27 թիվ 15-Պ որոշումը Ի. Բ. Դելովայի բողոքի հիման վրա ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 31-րդ հոդվածի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

[19] http://www.mdac.info/en/czech-republic-constitutional-court-finds-deprivat

[20] http://www.mdac.info/en/news/czech-republic-enacts-legal-capacity-law-reform

Անձին անգործունակ ճանաչելու ինստիտուտը ինքնին չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին, մասնավորապես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 12-րդ հոդվածին:

Բացի այդ, քրեական դատավարության օր-ով սահմանված է, որ եթե անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պատճառով չի կարող մասնակցել գործով վարույթին, քննիչը կամ դատախազն այդ մասին կազմում են արձանագրություն, որն ուղարկվում է դատավորին համապատասխան անձին անգործունակ ճանաչելու հարցը լուծելու համար[21]: Պարզ չէ, թե ինչ ընթացակարգով է դատարանում լուծվում տվյալ անձին անգործունակ ճանաչելու հարցը և ինչ դատավարական երաշխիքներից է օգտվում անձը տվյալ դեպքում: Քանզի, եթե ենթադրել, որ հարցը տվյալ դեպքում լուծվում է քաղ. դատ. օր-ով սահմանված հատուկ վարույթի համար նախատեսված ընթացակարգով, ապա քաղ. դատ. օր-ի 168-րդ հոդվածով հստակ ամրագրված է այն սուբյեկտների ցանկը, որոնք կարող են անձին անգործունակ ճանաչելու մասին դիմում ներկայացնել և քննիչը ու դատախազը տվյալ ցանկում նշված չեն:

2. Արդար քննությունը

Հայաստանի Հանրապետությունում անձը անգործունակ է ճանաչվում դատական կարգով: Անգործունակ ճանաչելու մասին գործ դատարանում կարող է հարուցվել անձի ընտանիքի անդամների, խնամակալության և հոգաբարձության մարմնի կամ հոգեբուժական տնօրինության դիմումի հիման վրա: Քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործի քննությանը պարտադիր է խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչի մասնակցությունը: Միևնույն ժամանակ ՀՀ օրենսդրությամբ չի սահմանվում անձի պարտադիր մասնակցությունը իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության ընթացքում: Ըստ ՀՀ քաղ. դատ. օր-ի անձը կարող է դատարան կանչվել, եթե դա թույլ է տալիս նրա առողջությունը: Տվյալ դեպքում դատարանին վերապահված է անձին դատարան հրավիրելու հայեցողություն և դատարանը որևէ կերպ պարտադրված չէ անձամբ լսել անձի կարծիքը: Ուսումնասիրված դատական գործերը ցույց են տալիս, որ դատաքննության ընթացքում որպես կանոն չի լսվում անձը: Դատարանը որոշում է կայացնում՝ հիմք ընդունելով դատահոգեբուժական փորձաքննության արդյունքները և

[21] Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օր-ի 451-ի 1-ին մասը:

խնամակալության և հոգաբարձության մարմնի ցուցմունքը: Ինչպես նաև, դատարանին հնարավորություն չի տրվում անձնական կարծիք կազմել անձի հոգեկան հնարավորությունների մասին, քանզի անձը տվյալ դեպքում հանդիսանում է ինչպես դատաքննության մեջ ներգրավված շահագրգիռ անձ, այնպես էլ դատարանի քննության հիմնական առարկա[22]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը չի սահմանում դրույթներ անգործունակ ճանաչվող անձին դատական քննության և դատական նիստերի մասին ծանուցման մեխանիզմների մասին: Կարելի է ենթադրել, որ անձը այսպես թե այնպես կարող է տեղեկանալ իրեն անգործունակ ճանաչելու մասին դատարանում հարուցված գործի մասին, քանզի գործի քննության շրջանակներում նա ենթարկվում է դատահոգեբուժական փորձաքննության: Սակայն տվյալ դեպքում պարզ չէ, թե անձը որքանով է տեղեկանում, որ դատարանը քննում է իրեն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործ: Չտեղեկացնելով դատական քննության տեղի և ժամի մասին, ինչպես նաև դատավարական իրավունքների մասին՝ խախտվում է անձի՝ դատարանի կողմից լսված լինելու իրավունքը:

3. Բողոքարկումը և վերանայումը

Ըստ ՀՀ քաղ. օրենսդրության անձը կարող է գործունակ ճանաչվել դատարանի վճռի հիման վրա: Անձին գործունակ ճանաչելու մասին վճռի հիման վրա վերացվում է նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը: Դատարանը վճիռը կայացնում է դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության հիման վրա: Ընդ որում ՀՀ օրենսդրությունը որպես անձին գործունակ ճանաչելու պայման՝ նշում է նրա ապաքինումը:

Անձին գործունակ ճանաչելու մասին դիմում ներկայացնում են անձի խնամակալը, ընտանիքի անդամը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը: Անձը զրկված է իր գործունությունը վերականգնելու դատավարական իրավունքից և չի կարող որևէ այլ հայցով դիմել դատարան իր իրավունքների վերականգնման նպատակով: Այսպիսով, նվազագույնի է հասցվում անձի՝ որոշում կայացնելու, իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունը, խախտվում է անձի արդար դատաքննության իրավունքը[23]:

[22] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Շտուկատուրով ընդդեմ Ռուսաստանի (Shtukaturov v Russia), գործով, 2008 թ. մարտի 27, պարբ. 72

[23] Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Շտուկատուրով ընդդեմ Ռուսաստանի (Shtukaturov v Russia), գործով, 2008 թ. մարտի 27, պարբ. 90-91

4. Այլ իրավունքների իրականացումը

1. Ըստ ՀՀ օրենսդրության՝ անձը, անկախ հոգեկան խանգարման աստիճանից, կարող է ճանաչվել անգործունակ, եթե ապացուցվում է, որ նա հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը: Անգործունակ ճանաչվելու դեպքում նրա նկատմամբ նշանակվում է խնամակալություն և նրա իրավունքներն իրականացվում են խնամակալի միջոցով: Միևնույն ժամանակ նա զրկվում է աշխատանքային, ընտրական, ամուսնալնտանեկան մի շարք իրավունքներից, իր իրավունքների և ազատությունների և օրինական շահերի դատական, պետական այլ մարմինների առջև անձամբ պաշտպանելու և խախտված իրավունքները վերականգնելու հնարավորությունից: Անձը զրկվում է որոշում կայացնելու, գործելու իրավունքից ինչպես իր կյանքում էական նշանակություն ունեցող հարցերի, այնպես էլ ամենաաննշան, կենցաղային հարցերի շուրջ: Նման իրավիճակում խախտվում են ոչ միայն միջազգային մարդու իրավունքի դրույթները, այլ նաև ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 14.1-րդ, 18-րդ, 20-րդ, 31-րդ հոդվածները, 48-րդ հոդվածի 7-րդ մասը[24]:

[24] **Հոդված 3.** Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են:
Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:
Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:
Հոդված 14. Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից:
Հոդված 14.1. Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:
Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:
Հոդված 18. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:
Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:
Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:
Յուրաքանչյուր ոք, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին:
Հոդված 20. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:
Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:
Յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք:
Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք:
Տուժողին պատճառված

Առաջարկվող լուծումները

Անհրաժեշտ է ներպետական օրենսդրությունը համահունչ դարձնել մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերին և ՀՀ Սահմանադրությանը: Մասնավորապես.

1. Վերացնել անձին անգործունակ ճանաչելու և խնամակալի կողմից իր փոխարեն որոշումներ կայացնելու համակարգը:

2. Մշակել այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա սոցիալ-հոգեբանական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել իրենց պահանջներին և ունակություններին համապատասխան բոլոր հնարավոր հարցերում որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ մատչելի աջակցությամբ՝ ստեղծելով երաշխիքներ այլ անձանց և պատասխանատու պետական մարմինների կողմից չարաշահումներից և անձի իրավունքների խախտումներից զերծ մնալու համար:

3. Մինչ նոր համակարգի ներդրումը անհրաժեշտ է կատարել այնպիսի բարեփոխումներ, որոնք հնարավորություն կտան անձին, որի գործունակությունը սահմանափակվել է, կամ իր կողմից ընտրված ներկայացուցչին դիմել իրավասու մարմին գործունակությունը վերականգնելու պահանջով:

Մասնավորապես առաջարկվում է՝

1. Փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, սահմանելով անձին գործունակությունից զրկելու առավել ճկուն համակարգ, այսինքն՝ մասնակի սահամանափակման մեխանիզմներ, այլ ոչ միայն զրկելու: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ապահովել, որպեսզի գործունակության սահմանափակելու յուրաքանչյուր դեպքում հաշվի առնվեն տվյալ անձի անհատական կարողությունները և ունակությունները, գործունակության սահմանափակումը պետք է յուրաքանչյուր

Հոդված 31. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:
Հոդված 48. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրներն են՝
7) իրականացնել հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրեր, խթանել հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին.

դեպքում նախատեսի կոնկրետ իրավունքների սահմանափակում: Քաղաքացիական օրենսգրքում կատարել լրացում, սոցիալ-հոգեբանական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց որոշում կայացնելու համար աջակցության մեխանիզմի ներդրման նպատակով, օգտագործելով այլ պետություններում ներդրված լավագույն փորձը:

Տվյալ փոփոխությունների կատարելուն պես փոփոխություններ կատարել Աշխատանքային, Ընտրական, Ընտանեկան, Քաղաքացիական դատավարության, Վարչական դատավարության, Քրեական դատավարության, «Բնակչության բժշկական օգնության մասին», «Հոգեբուժական օգնության մասին ՀՀ օրենքներում»: Փոփոխությունների նպատակն է քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխություններին համահունչ դարձնել անձանց իրավունքները անգործունակության հիմքով սահմանափակող այլ իրավական նորմերը:

2. Մինչ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելը անհրաժեշտ է փոփոխություններ կատարել քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության օրենսգրքերում: Այս փոփոխությունների նպատակն է ամրագրել սոցիալ-հոգեբանական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը՝ իրենց գործունակության վերականգնման նպատակով անձամբ դիմել դատարան:

3. Միևնույն ժամանակ հնարավորության դեպքում անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ Սահմանադրության մեջ (տես՝ ՀՀ Սահմանադրության 30 –րդ հոդվածի 3-րդ մաս):

3. Օգտագործված գրականություն

Միջազգային իրավունքի նորմեր

1. Հաշմանդամություն ունեցող անձնանց իրավունքների մասին կոնվենցիա
2. Չափահաս անգործունակ անձանց իրավունքների պաշտպանության սկզբունքների մասին Եվրոպայի Խորհրդի հանձնարարական
3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մատչելիության և հասարակության կյանքում իրենց լիարժեք և ակտիվ մասնակցության մասին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականը
4. Թունիսի վերաբերյալ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների

մասին եզրափակիչ դիտողությունները

5. Իսպանիայի վերաբերյալ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին եզրափակիչ դիտողությունները
6. Պերուի վերաբերյալ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին եզրափակիչ դիտողությունները
7. Հունգարիայի վերաբերյալ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին եզրափակիչ դիտողությունները

Եվրոպական դատարանի վճիռներ

8. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Շտուկատուրով ընդդեմ Ռուսաստանի
9. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Ալայոշ Կիշ ընդդեմ Հունգարիայի (Alajos Kiss v. Hungary) գործով, 2010 թ. մայիսի 20 Ֆ
10. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Սիկորան ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Sykorav. The Czech Republic) գործով, 2012 թ. նոյեմբերի 22

Ներպետական դատարանի վճիռներ

11. ՌԴ սահմանադրական դատարանի 2012 թ. հունիսի 27 թիվ 15-Պ որոշումը Ի. Բ. Դելովայի բողոքի հիման վրա ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 31-րդ հոդվածի 2-րդ կետի և 32-րդ հոդվածի սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

Ներպետական օրենդրություն

12. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
13. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրիք
14. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք
15. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
16. ՀՀ ընտրական օրենսգիրք
17. ՀՀ ընտանեկան օրենսգիրք
18. «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք
19. «Բնակչության բժշկական օգնության մասին» ՀՀ օրենք

Ուսումնասիրություններ

20. «Իրավունակության/Գործունակության իրավունքը մտավոր և սոցիալ-հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձանց համար» Թոմաս Համարբերգ